Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011թ.
հունիսի 30-ի նիստի N 25
արձանագրային որոշման

Մ Ե Թ Ո Դ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԵՎ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՎՃԱՐԻ ԱՆՁՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՓԱԹԵԹԻ ՄՇԱԿՄԱՆ

Եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի ստեղծման և ներդրման աշխատանքները նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Մրցութային փաթեթի պահանջները խմբավորվում են ըստ պարտադիր պահանջների և խորհրդատվական փաստաթղթերի (որոնք կներառեն ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ իրականացված աշխատանքների արդյունքները՝ որպես օժանդակ նյութ):

Եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի ստեղծման և ներդրման աշխատանքների կառավարման պլանը կբաժանվի երկու փուլերի.

Ընտրված կազմակերպությունն առաջին փուլում.

կատարում է ուսումնասիրություն և ստեղծում է ծրագրային ապահովության փաթեթի ամբողջական և մանրամասն նկարագրություն (մանրամասն տեխնիկական մասնագրերը)՝ ըստ մրցութային փաթեթի բովանդակության,

բոլոր շահագրգիռ կողմերի հետ համաձայնեցնում է ծրագրային ապահովության տեխնիկական մասնագրերը,

հաստատում է ծրագրի մշակման ընթացքում պահանջարկի փոփոխությունների իրականացման գործընթացը,

աշխատանքային խմբերի դրական եզրակացություններից հետո ձեռնամուխ է լինում անձնավորված համակարգի ծրագրավորման աշխատանքներին:

Մշակված տեխնիկական մասնագրերը կապահովեն ստեղծվելիք ծրագրային ապահովության որակական բարձր մակարդակը և համատեղելիությունն առկա այլ ծրագրային համակարգերի հետ, ինչպես նաև՝ կապահովի կանխատեսելի ծրագրային ապահովություն, որն ամբողջովին կհամապատասխանի շահագրգիռ կողմերի սահմանված պահանջների չափորոշիչներին:

Երկրորդ փուլում, ըստ տեխնիկական մասնագրերի ընտրված կազմակերպությունն սկսում է ծրագրային ապահովության ստեղծման գործընթացը՝ ծրագրային ապահովության ստեղծման «Ծրագրային ապահովման ճկուն մշակում» /Agile Software Development Methodology/ մեթոդաբանության Scrum /կամ համատեղելի/ մեթոդով, ինչը ենթադրում է.

ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում հետադարձ կապի առկայություն պատվիրատուի և ընտրված կազմակերպության միջև,

չկատարված պարտավորությունների առաջնահերթ կատարում,

կարճ կրկնվող քայլերի կամ սպրինտի (sprints) շարքում ամրագրված հիմնական չկատարված պարտավորությունների, բացթողումների ամբողջության ավարտում,

ամենօրյա հակիրճ հանդիպում (որը կոչվում է Scrum), որի ընթացքում մեկնաբանվում է առաջընթացը, նկարագրվում է առաջիկա աշխատանքը և առաջ են քաշվում առկա խոչընդոտները,

պլանավորման հակիրճ խորհրդակցություն, որի ընթացքում սպրինտի (sprints) համար սահմանվում են չկատարված պարտավորությունները,

ակնթարթների հակիրճ անդրադարձ և ամփոփում, որի ընթացքում աշխատանքային խմբերի բոլոր անդամներն անդրադառնում են անցյալ սպրինտին (sprint):

Առկա վիճակում, երբ ստեղծվելիք ծրագրային ապահովության պահանջներն ամբողջապես հնարավոր չէ սահմանել, առավել նպատակահարմար է օգտագործել ծրագրային ապահովություն ստեղծելու՝ վերոնշյալ մեթոդաբանությունը, քանի որ առաջարկվող մեթոդաբանությունը՝

նվազագույնի է հասցնում ստեղծվելիք ծրագրային ապահովության թերությունները,

ապահովում է հետադարձ կապ պատվիրատուի հետ,

պատվիրատուն ամբողջովին ներգրավված է իրականացման աշխատանքներին,

պատվիրատուին հնարավորություն է ընձեռվում ծրագրային ապահովության ստեղծման ընթացքում վերասահմանել և փոփոխել պահանջները,

ծրագրային ապահովման աշխատանքների կառավարումը դարձնում է առավել արդյունավետ, ապահովում է ծրագրային ապահովման ամբողջական համապատասխանություն, ըստ պատվիրատուի ներկայացված պահանջների, և հետագայում ապահովում է ծրագրային ապահովման շահագործման նվազագույն ծախսերը:

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011թ.
հունիսի 30-ի նիստի N 25
արձանագրային որոշման

Ն Ե Ր Կ Ա Յ Ա Ց Ո Ւ Ց Չ Ա Կ Ա Ն Կ Ա Զ Մ

ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ
(N 1 ԽՈՒՄԲ)

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչ (խմբի ղեկավար)

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2 ներկայացուցիչ

3. ԱՄՆ ՄԶԳ Հայաստան, կենսաթոշակային և աշխատանքի շուկայի բարեփոխումների ծրագրի 2 ներկայացուցիչ

4. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 3 ներկայացուցիչ

5. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 3 ներկայացուցիչ

6. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 1 ներկայացուցիչ (համաձայնությամբ)

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2011թ.
հունիսի 30-ի նիստի N 25
արձանագրային որոշման

Ն Ե Ր Կ Ա Յ Ա Ց Ո Ւ Մ Չ Ա Կ Ա Ն Կ Ա Զ Մ

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ
(N 2 ԽՈՒՄԲ)

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչ (խմբի ղեկավար)

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչ

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ներկայացուցիչ

4. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ներկայացուցիչ (համաձայնությամբ)

5. ԱՄՆ ՄԶԳ Հայաստան, կենսաթոշակային և աշխատանքի շուկայի բարեփոխումների ծրագրի ներկայացուցիչ